ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ
АРАРАТА

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60

Հեռ. /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

N 1/10/2900-06 "23" 05 2016 թ.

Ձեր՝ N 284-ի 1
17.05.2016թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ Արարատի մարզպետարան հասցեագրած Ձեր հարցման կապակցությամբ տեղեկացվում է .

1. ՀՀ Արարատի մարզպետարանում գործավարությունն իրականացվում է <<Mulberry>> էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով: Տեղեկություն ստանալու վերաբերյալ հարցումները համակարգում առանձնացված են, գրանցվում են քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:

2. ՀՀ Արարատի մարզպետարանում տեղեկություն ստանալու հարցումները գրանցվում, դասակարգվում, ինչպես նաև դրանց վիճակագրությունը վարվում է համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի <<Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին>> N 1204-Ն որոշմամբ սահմանված կարգի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատարող՝ Գ. Խաչատրյան
Հեռախոս՝ 0235 26850